ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Տավուշի մարզային բաժին

ք.Իջևան,4001, Երիտասարդական 1, հեռ.060713546

Ելք N 0028871480, 03 նոյեմբերի 2026 թ.

Արթուր Ֆրոնտիկի Քոքոբելյան
Տավուշի Մարզ, Իջևան, Ս. Սաքոյի Փ,Շենք 6

Էսմիրալդա Քոքոբելյան Արթուրի
Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, Մաքրավան
Թաղ. Մ. Մեծարենցի Փ.,Տուն 10

ՈՐՈՇՈՒՄ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

02 նոյեմբերի 2026 թ. **ք.Իջևան**

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Տավուշի մարզային բաժին, հարկադիր կատարող արդարադատության կապիտան Սերգեյ Ղալթախչյանս ուսումնասիրելով թիվ **12528464** կատարողական վարույթի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից **20 սեպտեմբերի 2024 թ.** տրված թիվ **ՏԴ/3835/02/23** կատարողական թերթի համաձայն պետք է՝

Էսմիրալդա Արթուրի Քոքոբելյանի, Լիդա Լյուդվիգի Մարկոսյանի, Շաքե Արթուրի Յորդանյանի, Ջեմմա Արթուրի Միլիտոնյանի ընդդեմ Արթուր Ֆրոնտիկի Քոքոբելյանի, Իսրայել Ֆրոնտիկի Քոքոբելյանի՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բնեղենով առանձնացնելու, իսկ դրա անհնարինության դեպքում գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու և ստացված գումարը ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ բաժիններին համաչափ բաշխելու պահանջի մասին, հայցը բավարարել: ՀՀ Տավուշի մարզ, Իջևան համայնք, Սևքարեցի Սաքոյի փողոց, 6 շենք, թիվ 7 հասցեում գտնվող թիվ 14062023-11-0013 սեփականության վկայականով անշարժ գույքը հրապարակային սակարկություններով վաճառել, վաճառքից ստացված գումարը բաշխել ընդհանուր համատեղ սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ՝ յուրաքանչյուրին 1/6 չափով: Արթուր Ֆրոնտիկի Քոքոբելյանից, Իսրայել Ֆրոնտիկի Քոքոբելյանից համապարտության կարգով հօգուտ Լիդա Լյուդվիգի Մարկոսյանի բռնագանձել 80,000 ՀՀ դրամ՝ որպես փորձաքննության կատարման համար վճարված դատական ծախսի գումար, 20,000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար, ինչպես նաև 150,000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:
Արթուր Ֆրոնտիկի Քոքոբելյանից, Իսրայել Ֆրոնտիկի Քոքոբելյանից համապարտության կարգով պետք է նաև բռնագանձել բռնագանձման ենթակա գումարի 5 տոկոսը, որպես կատարողական գործողությունների կատարման ծախսի գումար:
Կատարողական գործողությունների ընթացքում ՀՀ Տավուշի մարզ, Իջևան համայնք, Սևքարեցի Սաքոյի փողոց, 6 շենք, թիվ 7 հասցեում գտնվող թիվ 14062023-11-0013 սեփականության վկայականով անշարժ գույքը <<արմ թռասթ>> ՍՊԸ-ի կողմից գնահատվել է 17.700.000 ՀՀ դրամ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1, 43 հոդվածներով և «հրապարակային սակարգության մասին» 35.1, 35.2, 35.3 35.4 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

ՀՀ Տավուշի մարզ, Իջևան համայնք, ք.Իջևան, Սևքարեցի Սաքոյի փողոց, 6 շենք, թիվ 7 հասցեում գտնվող թիվ 14062023-11-0013 սեփականության վկայականով անշարժ գույքըներկայացնել հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ harkadir.ajurd.am միջոցով:
Լոտի անվանումը, նկարագիրը՝ ՀՀ Տավուշի Իջևան համայնքի, Սևքարեցի Սաքոյի փողոցում գտնվող 6 շենքի թիվ 7 բնակարան /սեփականության վկայական 14062023-11-0013/, իրավունքի տեսակը՝ ընդհանուր համատեղ սեփականություն, շենքի տեխնիկական վիճակը՝ բարվոք, հարկայնությունը՝ 5, հարկը՝ 3
Գնահատման գինը՝ 17.700.000 ՀՀ դրամ, մեկնարկային գինը՝ 13.275.000 ՀՀ դրամ, գույքի քանակը՝1 հատ:
Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ 04 Դեկտեմբեր 2026թ:

Որոշման պատճենն ուղարկել կողմերին:
Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի

մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի::

Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն՝ Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4–րդ, 5–րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո, լոտը չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտն իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց հետո, իսկ գույքի /լոտի/ հանձման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում՝ նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:
Կատարողական վարույթի վերաբերյալ տեղեկություն կարող եք ստանալ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության WWW.cesa.am պաշտոնական կայքի <<անձնականգրասենյակ>> էլեկտրոնային հարթակի միջոցով:

հարկադիր կատարող՝ Ս. Ղալթախչյան

ստորագրություն՝